

<https://doi.org/10.59546/18290744-2023.4-9-105>

ԿԱՐԱՊԵՏ ՍՄԲԱՏՅԱՆ
ՀՀ դատախազության Թիվ 2 կայազորի
գինվորական դատախազության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

KARAPET SMBATYAN
*Number Two Garrison's Prosecutor of Prosecutor's
Office of the Republic of Armenia,
Master at Yerevan State University Faculty of law*

КАРАПЕТ СМБАТЯН
*Прокурор военной прокуратуры второго
гарнизона Республики Армения,
Магистр юридического факультета
Ереванского государственного университета*

**ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ**

**REQUESTS IN THE NEW CRIMINAL PROCEEDING
CODE OF THE REPUBLIC OF ARMENIA**

**ХОДАТАЙСТВА В НОВОМ
УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА**

Ներածություն

**ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում առկա խնդիրը՝ կապված
միջնորդության հասկացության և մյուս իրավակարգավորումների միջև**

Քրեական դատավարությունում միջնորդությունները հանդես են գալիս որպես կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի ապահովման կարևորագույն երաշխիքներ: Խոսքը հատկապես վերաբերում է մինչդատական վարույթին, երբ կողմերի հավասարությունը լիարժեքորեն ապահովված չէ, նախաքննության ընթացքում վարույթի մասնավոր մասնակիցները ծանոթ չեն լինում քրեական վարույթի նյութերին, գործի ընթացքին և որոշակի հանգամանքներ պարզելու, գործողություններ կատարելու կամ որոշումներ կայացնելու խնդրանքով դիմում են վարույթն իրականացնող մարմնին: Միջնորդությունները՝ որպես քրեական դատավարությունում «զենքերի հավասարության» սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք մատնանշվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կա-

յացված մի շարք վճիռներում¹: Միջնորդությունը՝ որպես իրավունքի որևէ ճյուղի բաղկացուցիչ տարր, աստղացվում է ոչ միայն քրեական դատավարության հետ: Այս ինստիտուտը հանդիպում է և քաղաքացիական և վարչական դատավարությունում, և իրավունքի մյուս ճյուղերում: Ավելին, այն բնորոշ է ոչ միայն իրավագիտությանը: «Արդի հայերենի բացատրական բառարանում» միջնորդությունը ի թիվս այլնի բնորոշվում է որպես պաշտոնական գրություն որևէ մարմնի, պաշտոնատար անձի՝ որևէ գործը այս կամ այն ընթացքը տալու մասին²:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում միջնորդությունը հանդես է գալիս որպես ինքնավար հասկացություն, այսինքն՝ մեկնաբանվում է այնպես, ինչպես նախատեսված է տվյալ օրենսգրքում և դրա վերաբերյալ կարգավորումները հիմնված են միայն քրեադատավարական իմաստով միջնորդություն հասկացության հետ:

Հիմնական հետազոտություն

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) միջնորդությունը բնութագրվում է որպես վարույթի մասնակցի կամ այլ անձի խնդրանք՝ ուղղված վարույթն իրականացնող մարմնին: Ստացվում է, որ միջնորդությունը խնդրանք է, որը ձևակերպվում և վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների կողմից ուղղվում է քննիչին՝ վարույթը նախաձեռնելու պահից մինչև մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հսկող դատախազին հանձնելը, հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը և դատարանին՝ մեղադրական եզրակացությունը դատախազից ստանալու պահից մինչև քրեական վարույթի ավարտը, ինչպես նաև դատական երաշխիքների վարույթներով: Մեր կարծիքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված միջնորդության հասկացության՝ վարույթն իրականացնող մարմնին ուղղված խնդրանքի վերաբերյալ իմպերատիվ պահանջի և մյուս իրավակարգավորումների միջև առկա են մի շարք հակասություններ:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի մասին՝ վարույթի մասնավոր մասնակիցներին ծանուցելուց հետո քննիչին և հսկող դատախազին ուղղված նրանց միջնորդությունները կարող են թողնվել առանց քննության, որը ենթակա չէ բողոքարկման: Սույն հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ մեղադրական եզրակացությունը կազմելով և դատախազին ուղարկելուց հետո, երբ քննիչն արդեն չի հանդիսանում վարույթն իրականացնող մարմին, նրան հնարավոր է միջնորդություն ուղղել: Ոչ վարույթ իրականացնող մարմնին ուղղված միջնորդությունների մասին կարգավորումներ առկա են նաև բազմաթիվ այլ իրավիճակներում: Մասնավորապես, Օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում սահմանված է, որ հսկող դատախազն իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով: Նույն կերպ, Օրենսգրքի բացարկի վերաբերյալ հասկացությունը, համաձայն որի բացարկը՝ վարույթի

¹ Տես օրինակ՝ *Miminoshvili v Russia*, կետ 141, *Vidal v Belgium*, կետ 34, *Zhuk v Ukraine*, կետ 35, *G.B v France*, *Georgios Papageorgiou v Greece*:

² *Էդուարդ Քազրայի Աղայան*, «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, 1976 թ., էջ 1015:

մասնակցի գրավոր միջնորդությունն է դատավորին, վարույթի հանրային մասնակցին, փորձագետին, թարգմանչին, ընթերակային կամ դատական նիստի քարտուղարին վարույթին մասնակցելուց ազատելու վերաբերյալ, նույնպես խնդրահարույց է, քանի որ հսկող դատախազին հայտնած բացարկի հարցը լուծում է վերադաս դատախազը, իսկ հետաքննիչին, հետաքննության մարմնի պետին, քննիչին, քննչական մարմնի ղեկավարին հայտած բացարկի հարցը լուծում է հսկող դատախազը, և ոչ թե վարույթն իրականացնող մարմինը:

Շարունակելով այս շարքը նշենք, որ միջնորդության հասկացության և Օրենսգրքի մյուս կարգավորումների միջև առկա են հակասություններ նաև հետևյալ իրավիճակներում: Օրենսգրքի 189-րդ հոդվածում նշվում է, որ հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա քննիչն իրավասու է հսկող դատախազին ներկայացնելու անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն: Նույն կերպ, քննիչը միջնորդություն է ներկայացնում հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին, որի հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին, ինչպես նաև քննիչը իրավասու է հսկող դատախազին միջնորդություն ներկայացնել հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու անհրաժեշտության դեպքում: Նշված բոլոր իրավակարգավորումների դեպքում բացակայում է խնդրանքն ուղղված վարույթն իրականացնող մարմնին: Ավելին, մի շարք դեպքերում հենց վարույթ իրականացնող մարմինն է խնդրանքով դիմում այլ մարմնի: Սրա հետ կապված հարկ ենք համարում նշել, որ որոշներն առաջարկում են քննիչի կողմից դատախազին կամ դատարանին միջնորդություն ներկայացնելը չներկայացնել «միջնորդություն» տերմինով և չնույնացնել վարույթի մասնավոր մասնակիցների կողմից վարույթն իրականացնող մարմնին միջնորդություն հարուցելու դեպքերի հետ, քանի որ նմանատիպ միջնորդություններն ունեն մի շարք ընթացակարգային և այլ տարբերություններ³:

Միջնորդության հասկացության հետ կապված խնդիրն առկա է նաև դատարանին ուղղված միջնորդությունների դեպքում, երբ վերջինս այլևս չի հանդիսանում վարույթն իրականացնող մարմին: Օրինակ՝ տուժողի կամ այլ շահագրգիռ անձի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ դատարանն իրավասու է գույքի արգելադրումը պահպանելու նաև քրեական վարույթի ավարտից հետո՝ մինչև դատական ակտի կատարումը:

Մեր համոզմամբ, նշված հակասությունների պատճառը նախկին՝ 1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա միջնորդության հասկացության առանց փոփոխության, ավտոմատ ներդնումն է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք: Նախկին օրենսգրքում նույնպես միջնորդությունը խնդրանք էր, որն ուղղվում էր վարույթն իրականացնող մարմնին: Սակայն խնդիրը նրանում է, որ մինչդատական վարույթում վարույթ իրականացնող մարմին էին միաժամանակ հանդիսանում 3 սուբյեկտներ՝ հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը՝ առանց որևէ փուլերի առանձնացման: Այսինքն, չկար որևէ տարանջատում, որը խնդիր կառաջացներ միջնորդության հասցեատիրոջը ուղարկելու հարցում, քանի որ և քննիչի կողմից դատախազին ուղղված միջնորդություններն էին համարվում վարույթ իրականացնող մարմնին ուղղված, և մասնավոր մասնակիցների միջնորդություններն էին ուղղված քննիչին և դատախազին համարվում վարույթն իրականացնող մարմնին ուղղված, և այդպես շարունակ:

Գիտական գրականության մեջ առաջարկվում են միջնորդությունների վերաբերյալ տար-

³ Ходатайства и жалобы в уголовном процессе (анализ и комментарий, часть первая)
<https://bypravo.ru/hodatajstva-i-zhaloby-v-ugolovnom-protsesse-analiz-i-kommentarij-chast-1/>.

բեր հասկացություններ: Առավել ընդհանրական է թվում այն տարբերակը, ըստ որի՝ միջնորդությունը պատշաճ ձևակերպված պաշտոնական դիմում է ուղղված ապացուցման և գործի լուծման իրավասություն ունեցող անձանց՝ իրենց լիազորությունների մեջ մտնող գործողություններ կատարելու նպատակով⁴: Որպես օրենսդրական նման խնդրի լուծման տարբերակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է վերանայել 2021 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա միջնորդության հասկացությունը: Առաջարկում ենք այն խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ միջնորդությունը՝ վարույթի մասնակցի կամ այլ անձի խնդրանքն է ուղղված վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև այն սուբյեկտին, որն օժտված է տվյալ միջնորդությունը լուծելու լիազորություններով:

2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա մյուս իրավական խնդիրները՝ կապված միջնորդությունների հետ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդված 1-ին մասում սահմանված է քննիչի միջնորդության հիման վրա հսկող դատախազի կողմից անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու իրավասության մասին: Սակայն, վերոնշյալ իրավակարգավորման մեջ բացակայում են համապատասխան միջնորդությանը հսկող դատախազի կողմից որոշմամբ անդրադառնալու համար սահմանված դատավարական ժամկետները: Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հսկող դատախազը տվյալ միջնորդությանը տևական ժամանակ չի անդրադառնում, այն հիմնավորմամբ, որ Օրենսգրքը չի սահմանում միջնորդությանը պատասխանելու ժամկետներ, և, հետևաբար, դատախազը կարող է դրան անդրադարձ կատարել այն ժամանակ, երբ միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար էական հանգամանքներ կպարզվեն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը: Նույն օրենքի 40-րդ հոդվածում սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ ...2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը բաղկացած է մի քանի մասերից: Առաջին մասը վերնագրված է ընդհանուր դրույթներ վերտառությամբ, իսկ առաջին մասին 5-րդ բաժինը կոչվում է ընդհանուր այլ դրույթներ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առաջին մասը «Նորմատիվ իրավական ակտերի մասին»

⁴ *Насанова И.А.*, Ходатайства, жалобы, отводы-сходства и различия
<https://cyberleninka.ru/article/n/hodataystva-zhaloby-otvody-shodstva-i-razlichiya/viewer>.

ՀՀ օրենքի իմաստով ընդհանուր մասն է: Օրենսգրքի առաջին մասի՝ ընդհանուր դրույթների 154-րդ հոդվածում սահմանված է, որ գրավոր միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի այն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ Օրենսգրքի հատուկ մասում, 196-րդ հոդվածում միջնորդությանը պատասխանելու ժամկետ չսահմանելը չի նշանակում, որ դրան հսկող դատախազի կողմից տևական ժամանակ չպետք է անդրադարձ կատարվի: Տվյալ դեպքում պետք է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործի ընդհանուր մասի նորմը համաձայն որի՝ եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը: Հետևաբար, քննիչի կողմից հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդություն ստանալու դեպքում հսկող դատախազը պետք է այն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում դրա վերաբերյալ համապատասխան որոշում կայացնի:

Միջնորդությունների հարուցումը և դրանց լուծումը իրավահարաբերություններ են, որտեղ միջնորդությամբ հանդես եկած սուբյեկտի կողմից իր իրավունքը իրացնելը համապատասխանաբար ստիպում է դրա լուծման իրավասություն ունեցող սուբյեկտին մի շարք պարտականություններ կատարել, մասնավորապես՝ միջնորդությունն ընդունել, սահմանված ժամկետներում և կարգով այն լուծել, այդ մասին հայտնել միջնորդություն հարուցած անձին և պարզաբանել դրա բողոքարկման կարգը⁵: Սրա հետ կապված նշենք, որ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ պաշտպանը կամ մեղադրյալը հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությամբ դիմում են և քննիչին և հսկող դատախազին: Տվյալ իրավիճակում հարց է ծագում՝ ինչ վարույթային ակտ պետք է կայացնեն քննիչը և հսկող դատախազը: Քննիչը որպես վարույթի հանրային մասնակից քրեական հետապնդումը դադարեցնելու իրավասությամբ օժտված չէ, վերջինս չի կարող բավարարել այդ միջնորդությունը: Բացի այդ, նման միջնորդություն ստանալու դեպքում, եթե քննիչը բավարարի միջնորդությունը և հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությամբ դատախազին դիմի, կստացվի, որ վերջինս ներկայացնում է ստացած խնդրանքի մասին խնդրանք, ինչը կազուսային վիճակ կստեղծի:

Նման դեպքերում գտնում ենք, որ այդպիսի միջնորդություն հարուցելը նպատակահարմար չէ, քանի որ քննիչն օժտված չէ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորությամբ, սակայն, այնուամենայնիվ, եթե հարուցվել է նման միջնորդություն, քննիչն իր որոշմամբ կարող է մերժել այն, հիմնավորելով, որ չունի հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորություն: Միևնույն ժամանակ, գտնելով, որ միջնորդությունը հիմնավոր է, քննիչը պետք է սեփական նախաձեռնությամբ միջնորդությամբ դիմի դատախազին՝ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Օրենսգրքում առկա՝ միջնորդության հասկացության թերի ձևակերպման հետևանքով պաշտպանի կողմից դատախազին նման միջնորդությամբ դիմելն առաջին հայացքից իրավաչափ չէ, քանի որ մինչև քննիչի կողմից մեղադրական եզրակացությամբ քրեական վարույթը հսկող դատախազին հանձնելը, վերջինս չի հանդիսանում վարույթն իրականացնող մարմին: Նման միջնորդությունների առկայության դեպքում հնարավոր է մի քանի լուծում: Առաջին, հսկող դատախազը հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին պաշտպանի կամ մեղադրյալի միջնորդությունը ստանալու դեպքում, կարող է մերժել այն, հիմնավորելով, որ չի հանդիսանում

⁵ Власова Н.А., Заявление и разрешение ходатайств в ходе предварительного расследования //Гос-во и право. 2006. N 4, 41-47 էջեր:

վարույթն իրականացնող մարմին: Միևնույն ժամանակ, եթե հսկող դատախազը գտնի, որ առկա է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերից որևէ մեկը, ապա պետք է սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնի՝ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Սակայն, տվյալ խնդրի լուծման ավելի ընդունելի տարբերակ ենք դիտարկում հսկող դատախազի կողմից միջնորդության բավարարումը և անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդման դադարեցումը կամ չհարուցումը, այն հիմնավորմամբ, որ նշված որոշման կայացումը նախաքննության փուլում իր բացառիկ լիազորությունների տիրույթում է գտնվում և, հետևաբար, դատախազական հսկողություն իրականացնելիս իրավունքի շահերից ելնելով, բավարարում է հարուցված միջնորդությունը, չնայած այն հանգամանքին, որ չի հանդիսանում վարույթն իրականացնող մարմին: Գտնում ենք, որ հսկող դատախազը նույն կերպ պետք է վարվի բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան որոշման կայացումը վերջինիս բացառիկ լիազորությունն է, օրինակ՝ տուժողի կողմից որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդություն ներկայացվելու դեպքում: Իրավունքի շահի ապահովման արժեքաբանական մոտեցումն իրավակիրառողից պահանջում է հանրային գործառույթներն իրականացնելիս որոշակի դեպքերում իրավունքը զարգացնել օրենքի տեքստից դուրս և ոչ թե կուրորեն ու մաթեմատիկական ճշգրտությամբ ղեկավարվել օրենքով⁶:

Միջնորդությունների վերաբերյալ հաջորդ խնդիրը կայանում է նրանում, թե արդյոք վարույթն իրականացնող մարմինը բոլոր միջնորդություններին պետք է անդրադառնա որոշման տեսքով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է միջնորդության քննության առնելու և լուծելու պարտադիրության մասին, իսկ նույն հոդվածի 6-րդ մասում նշվում է, որ միջնորդության վերաբերյալ ընդունված որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմինն անմիջապես ուղարկում է միջնորդությունը հարուցած անձին: Արդյոք վարույթն իրականացնող մարմինը միջնորդությունը կարող է լուծել միայն որոշմամբ, թե այլ վարույթային ակտով ևս: Գտնում ենք, որ որպես կանոն միջնորդության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի՝ այն բավարարելու կամ մերժելու մասին՝ հաշվի առնելով Օրենսգրքի 154-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումը, սակայն բացառիկ դեպքերում, որոշման կայացումը նպատակահարմար չէ: Օրինակ՝ բացառիկ կարող է համարվել այն դեպքը, երբ քննչական գործողությանը մասնակցող վարույթի մասնավոր մասնակիցը բանավոր միջնորդություն հարուցի այլ քննչական գործողություն կամ տվյալ քննչական գործողության շրջանակներում կոնկրետ գործողություն կատարելու վերաբերյալ, որը քննիչի կողմից բավարարվի: Դժվար է պատկերացնել տվյալ միջնորդության բավարարումը որոշում կայացնելով: Պարզապես քննիչը կարող է բավարարել միջնորդությունը՝ կատարելով համապատասխան գործողությունը: Դրանով քրեական վարույթի շրջանակներում որևէ անձի իրավունքները չեն սահմանափակվում, և վարույթն իրականացնող մարմինը գործում է վարույթի հանրայնության սկզբունքը ապահովելով՝ բացառապես իրավունքի շահերից ելնելով: Բացի այդ, դա կապահովի բանավոր միջնորդությունը անհապաղ քննության առնելու և լուծելու պահանջը: Այս դեպքում, սակայն, խոսքը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ բավարարվում է հարուցված միջնորդությունը, իսկ միջնորդությունը մերժելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի:

⁶ *Ղամբարյան Ա.*, ՀՀ քրեական դատավարության իրավունքի զարգացումը օրենսգրքին հակառակ (contra legem), «ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր», 2022թ., էջ 26:

Միջնորդությունները՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքերի և արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենքներում

Սույն հոդվածի շրջանակներում արդեն անդրադարձել ենք միջնորդությունների հասկացության վերաբերյալ գործող և նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի տարբերություններին: Այժմ անդրադառնանք օրենսգրքերի մի շարք այլ տարբերություններին: Գործող քրեական դատավարության օրենսգիրքն, ի տարբերություն նախկին օրենսգրքի, սահմանում է գրավոր միջնորդությունները քննության առնելու և լուծելու հստակ՝ 7 օրյա ժամկետ: Նախկին օրենսգրքում նշվում էր միայն, որ միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և քննվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո:

Բացի այդ, նախկին օրենսգիրքը հնարավորություն էր տալիս միջնորդությունները թողնել առանց քննության միայն այն դեպքում, երբ այն հարուցվել է ոչ ժամանակին, իսկ գործող օրենսգիրքը հնարավորություն է տալիս վարույթն իրականացնող մարմինն հարուցված միջնորդությունը թողնել առանց քննության ի թիվս ոչ ժամանակին հարուցված միջնորդության, նաև այն դեպքում, երբ միջնորդությունը բերվել է դա միջնորդություն հարուցելու իրավունք չունեցող անձը, կամ այն ստորագրված չէ, ինչպես նաև հայեցողական լիազորություն է տրված միջնորդությունը թողնելու առանց քննության, եթե մեղադրական եզրակացություն է կազմել նախաքննության ավարտի մասին և վարույթի մասնակիցներին ծանուցվել է այդ մասին:

Իսկ 07.03.1961 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ընդհանրապես բացակայել է միջնորդության հասկացությունը: Բացի այդ, օրենսգիրքը հնարավորություն է տվել վարույթն իրականացնող մարմինն միջնորդությունը մասամբ մերժելու մասին որոշում կայացնել: Հետաքրքիր կարգավորում է նախատեսում տվյալ քրեական դատավարության օրենսգիրքը ապացույցներ հավաքելու նպատակով հարուցված միջնորդությունների վերաբերյալ: Մասնավորապես, կոնկրետ ապացույցներ հավաքելու խնդրանքով կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի և նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի և պատասխանողի և նրանց ներկայացուցիչների միջնորդությունները քննիչն իրավունք չի ունեցել մերժել, եթե դրանք կարող էին նշանակություն ունենալ գործի համար:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքերում առհասարակ բացակայում է միջնորդության հասկացությունը: ՌԴ օրենսգրքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև եզրակացնել, որ դատավարության մասնակիցները միջնորդությամբ իրավունք չունեն դիմել դատախազին, ինչը փոքր-ինչ տարօրինակ է: Վրաստանում միջնորդություններն ի թիվս այլնի պետք է նաև համապատասխանեն մի շարք այլ պահանջների, մասնավորապես՝ դրանք պետք է պատճառաբանված լինեն և կարող են հարուցվել միայն այն միջնորդությունները, որոնք սահմանված են օրենսգրքով: Իսկ վարույթն իրականացնող մարմինն իր որոշմամբ առավելագույնը 3 օրվա ընթացքում կարող է ամբողջությամբ կամ մասնակի բավարարել միջնորդությունը կամ մերժել այն: Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգիրքը միջնորդություններն ուղղակիորեն կապում է մրցակցության սկզբունքի հետ, նշելով, որ կողմերն ունեն հավասար իրավունքներ ի թիվս այլնի նաև միջնորդություններ ներկայացնելու և դրանց լուծման հարցում:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում մի շարք խնդրահարույց հարցերի վերաբերյալ հանգել ենք եզրահանգումների: Մասնավորապես, ներկայացրել ենք ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում միջնորդությունների վերաբերյալ մի շարք թերի կարգավորումներ և առաջարկել դրանց լուծման եղանակներ: Մասնա-

վորապես՝ 1. Օրենսգրքում միջնորդության հասկացությունը ոչ լիարժեք է և այն պետք է վերաճեցվեր հետևյալ բովանդակությամբ. միջնորդությունը՝ վարույթի մասնակցի կամ այլ անձի խնդրանքն է ուղղված վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև այն սուբյեկտին, որն օժտված է տվյալ միջնորդությունը լուծելու լիազորություններով: 2. Քննիչի կողմից հսկող դատախազին ուղղված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չհարուցելու միջնորդության դեպքում հսկող դատախազը պետք է ղեկավարվի Օրենսգրքի ընդհանուր մասում սահմանված կարգավորմամբ և դրա վերաբերյալ համապատասխան որոշում կայացնի 7-օրյա ժամկետում: 3. Քննիչը հարուցված միջնորդություններին մեր կողմից նշված բացառիկ դեպքերում կարող է արձագանքել ոչ թե որոշման կայացմամբ, այլ գործողությունների կատարմամբ: 4. Պաշտպանի և մեղադրյալի կողմից քննիչին և հսկող դատախազին ուղղված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդության դեպքում, քննիչն իր որոշմամբ կարող է մերժել այն՝ հիմնավորելով, որ չունի հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորություն: Միևնույն ժամանակ, գտնելով, որ միջնորդությունը հիմնավոր է, պետք է սեփական նախաձեռնությամբ միջնորդությամբ դիմի դատախազին՝ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Իսկ հսկող դատախազը պաշտպանից կամ մեղադրյալից նման միջնորդություն ստանալու դեպքում՝ իրավունքի շահերից ելնելով և իր բացառիկ լիազորությունների տիրույթում գտնվելու հիմքով կարող է բավարարել հարուցված միջնորդությունը: Սույն հոդվածի շրջանակներում հպանցիկ անդրադարձել ենք նաև ՀՀ նախկին քրեական դատավարության և օրենսգրքերի և արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենքներում՝ միջնորդությունների վերաբերյալ կարգավորումներին:

Annotation. There are some new institutions and regulations in the Criminal Proceeding Code of The Republic of Armenia which have been adopted by Parliament, including about requests.

An object of the work is to demonstrate incomplete sides of new regulations on requests in detail, especially on definition, reaction deadline on requests which are addressed to prosecutor about not charging, sanity of always answering to requests with decisions, and regulations on requests in previous Criminal Proceeding Code and other countries criminal proceeding experiences. An aim of the work is to propose possible solutions to the problems that have been showed.

The work is introduced in principles of historical and comparative analyses as well as showing contemporary problems.

We think that it is succeeded in referring to the actual problems and its solutions of The New Criminal Proceeding Code on requests and regulations on requests in previous Criminal Proceeding Codes and and other countries criminal proceeding experiences.

Аннотация. В новом Уголовно-процессуальном кодексе РА, принятом Парламентом Армении, существует ряд институтов и урегулирований, в том числе относительно рассмотрения ходатайств.

Задача данной статьи – как можно подробнее изложить слабые стороны новых урегулирований по ходатайствам: по определению, в случае поданного следователем на имя прокурора, осуществляющего надзор, ходатайства о приостановлении или невозбуждении общественного уголовного преследования, рассмотрение сроков, ходатайства во всех случаях реагирования решением, в случае ходатайства о прекращении общественного уголовного преследования со стороны правозащитников и обвиняемого на имя следователя и прокурора, о последующих действиях вышеупомянутых лиц, а также по части существующих урегулирований ходатайств в предыдущем уголовно-процессуальном кодексе РА и уголовном праве других стран.

Работа изложена на основе актуальных проблем, исторического и сравнительного юридического анализа. Цель работы – предложить возможные варианты преодоления, пути решения представленных проблем.

Считаем, что удалось взять во внимание актуальные проблемы относительно рассмотрения ходатайств, представленных в новом Уголовно-процессуальном кодексе РА и возможные пути решения, по части ходатайств в предыдущих уголовно-процессуальных кодексах и уголовном праве других стран.

Բանալի բառեր - ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք, միջնորդության հասկացություն, միջնորդության վերաբերյալ որոշման ժամկետներ, հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդություն, իրավունքի շահ:

Keywords: the Criminal Proceeding Code of the Republic of Armenia, a definition of a request, deadlines for a decision on a request, request for a suspension of a public criminal prosecution, legal benefit.

Ключевые слова: новый уголовно-процессуальный кодекс РА, определение ходатайства, исчисление сроков рассмотрения ходатайств, ходатайство о прекращении уголовного преследования, интерес права.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք-ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք-ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ.:
3. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրք-ընդունվել է 07.03.1961թ., ուժի մեջ է մտել 01.07.1961թ.:
4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք - ընդունվել է 21.03.2018թ., ուժի մեջ է մտել 07.04.2018թ.:
5. Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան» Երևան, 1976թ., «Հայաստան» հրատարակչություն, 1015 էջ:
6. Насанова И.А., Ходатайства, жалобы, отводы-сходства и различия, 2011թ. «Вестник Воронежского института МВД России» стр. 1-4.
7. Власова Н.А., Заявление и разрешение ходатайств в ходе предварительного расследования //Гос-во и право. 2006. N 4, стр. 41-47
8. Ղամբարյան Ա., ՀՀ քրեական դատավարության իրավունքի զարգացումը օրենսգրքին հակառակ (contra legem), «ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր», 2022թ., 19-70 էջ:

Սմբատյան Կ. - ՀՀ դատախազության Թիվ 2 կայազորի գինվորական դատախազության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս. էլ. հասցե՝ karapetsmbatyan96@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 10.04.2023 թ., տրվել է գրախոսության 10.04.2023 թ., երաշխավորվել է ՀՀ գիտությունների ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի Քաղաքագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Մարիկյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.10.2023 թ.: